ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված « ԴԴ-ԳՀԾՁԲ-18/10» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի նոյեմբերի 16-ին կնքված N ԴԴ-ԳՀԾՁԲ-18/10-2 պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 19-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

1.1. Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5, 7.13:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

16.11.2018թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-18/10-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «19» «12» 2018թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Լևոնյանի, այսուհետ՝ «Կատարող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով նախատեսված պայմանները,և հիմք ընդունելով 16.11.2018թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-18/10-2» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը.կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք.Եղվարդ, Նար Դոսի 28ա
Հ/Հ՝ 900011192052	Հ/Հ 163228137481
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ 03308717
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հայէկոնոմբանկ ՓԲԸ, Նաիրի մ/6
Ղեկավար՝ ***Կ. Փոլադյան***	***Տնօրեն՝ Լ. Լևոնյան***
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«16» նոյեմբերի 2018 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-18/10-2» ծածկագրով պայմանագրի
« 19 » « 12 » 2018թ. կնքված N 1համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ծառայության				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայությունների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում	
			դեկտեմբեր	Ընդամենը
4	*71241200/507*	***ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Թալին նստավայրի վարչական շենքի գազամատակարարման աշխատանքների նախագծերի պատրաստում և ծախսերի գնահատում:***	***580 000***	***580 000***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192052
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ ***Կ. Փոլադյան***

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
Հասցե՝ ք.Եղվարդ, Նար Դոսի 28ա
Հ/Հ 163228137481
ՀՎՀՀ 03308717
Հայէկոնոմբանկ ՓԲԸ, Նաիրի մ/ճ

Տնօրեն՝ Լ. Լևոնյան

/ստորագրություն/
Կ.Տ